

քաւիմ

քրիստոս<sup>2</sup>

ՔԱԻԻՄ, կր. -չ.  
 քաւեալ եմ ի է 24  
 քաւեալ ի է 24  
 ՔԱԻ ԼԻՆԻ, միդ. ,  
 քաւ լիցի ժ-2 22  
 ՔՂԱՄԻԴ  
 քղամիդ, հ. , ի է 28  
 ՂՔՂԱՄԻԴՆ Ի է 31  
 ՔՂԱՆՅՔ, անեգ.  
 ՂՔՂԱՆԿԱ ԻԳ 5  
 ի ՔՂԱՆԿԱ → ժԴ 36  
 ՔՈՒ, ամ. , ետ.  
 ք Ս 20. Դ 6, 7. Ե 23<sup>2</sup>, 24<sup>2</sup>, 29, 30, 33,  
 36, 39, 43<sup>2</sup>. Չ 3<sup>2</sup>, 4<sup>2</sup>, 6<sup>2</sup>, 9, 10<sup>2</sup>, 17<sup>2</sup>, 18<sup>2</sup>,  
 22, 23. Է 3, 5, 22<sup>2</sup>. Ը 4. Թ 2, 5, 6<sup>2</sup>, 18,  
 22. ԺԱ 10. ԺԲ 2, 13, 47<sup>2</sup>. ԺԵ 2, 4, 28.  
 ԺԸ 8, 9, 15<sup>2</sup>. ԺԹ 19<sup>2</sup>, 21. Ի 15, ԻԱ 5.  
 ԻԲ 37, 39<sup>2</sup>, 44. ԻԳ 37, ԻԵ 25. ԻԶ 42,  
 52, 73  
 -դ ք Ե 29, 30  
 ք [j], ս. , ի է 21, 23  
 քում Դ 10, Չ 18, ԺԸ 33  
 ընդ քում, տր. , Ե 24, 25  
 ի քում է 3, 4  
 Ե ... քում ժԳ 27, Ի 21  
 ընդ ... քում է, նգ. , Ի 21  
 Ե ... քում է է 4, 5. ԻԲ 37<sup>2</sup>  
 քոց, ս. , ժԱ 10  
 քոց, տր. , ժԷ 15, ԻԲ 44  
 ի ... քոց Ե 29, 30. ԺԲ 37  
 Ե ... քոց ԻԲ 37  
 ք 2 համադասի միջեւ  
 ք ժ Ե 4, ԺԸ 8, ԺԹ 19  
 ընդ ... քում է ... , նգ. , Ի 21

ՔՈՒ, ամ. նիս.  
 ի քում աղան է 3  
 ք ... -դ.  
 քո աշակերտքդ թ 14  
 ի քում աղանդ է 4  
 ՔՈՒ, ստ. դ.  
 քո, ու. , Չ 13  
 քոյդ, ու. , Ի Ե 25  
 ՂՔՂՈՒ Ի 14  
 ՔՈՅ, ամ. , նիս.  
 քոյոյ, ս. , ԻԴ 3  
 ՔՈՅԲ  
 քոյոյ, ու. , ժԲ 50  
 քորք ժԳ 56  
 ՂՔՈՐԱ ժԹ 29  
 ՔՈՐԱՉԻՆ  
 Քորագի՛ն, ու. , ժԱ 21  
 ՔՈՒՆ, տ. Ի ՔՈՒՆ ԵՄ՝ ԼԻՆԻՄ, ՄՏԱՆԵԼ  
 ի քուն → ԻԵ 5  
 ի քուն, նգ. , ժԳ 25. ԻԶ 40, 43. ԻԸ 13  
 ի քնոյ անտի Ա 24  
 ի քուն էաք ԻԸ 13  
 ի քուն լինել ժԳ 25  
 ի քուն մտին ԻԵ 5  
 ՔՐԻՍՏՈՍ<sup>1</sup>  
 Քրիստոս, ու. , Ա 16, ԻԳ 10. Ի է 17, 22  
 Քրիստոս'սդ, ու. , ԻԶ 68  
 Քրիստոսն, ու. , Բ 4, ժԲ 23. ժԶ 16, 20.  
 ԻԴ 5, 23. ԻԶ 63  
 ի Քրիստոս → Ա 17  
 Քրիստոսի, ս. , Ա 1, 18. ժԱ 2. ԻԲ 42  
 Յիսուսի Քրիստոսի Ա 1, 18  
 ՔՐԻՍՏՈՍ<sup>2</sup> (կեղծ քրիստոս)  
 սուտ քրիստոսք ԻԴ 24

ՁՕՆ ԿՆՈՋՍ՝ ԼՈՒՍԻՆԻՆ

ԱՐՏԱՇԷՍԵԱՆ ԱՐՔԱՅԱՏՈՂՄԻ ԹԱԳԵՐԸ  
ԵՒ ԱՆՈՆՑ ԾԱԳՈՒՄԸ

Հայկական Արտաշեսեան արքայատոհմի թագերու ուսումնասիրումը մինչեւ օրս չէ արժանացած լուրջ ուշադրութեան եւ միայն մի քանի պատահական յօդուածներէ եւ Պր. Զ. Պտուկեանի Արտաշեսեան դրամներու ուսումնասիրութենէն բացի<sup>1</sup>, ոչ ոք թագերու մասին կարծիք չէ յայտնած, թէ եւ միայն վերոյիշեալ դրամներու վրայ է որ պատկերուած են Արտաշեսեան թագերը:

Երկարատեւ ուսումնասիրութիւններս, որոնք կը փափաքիմ լրացնել առանձին հատորի մը մէջ, դիւ հասցուցին հետեւեալ եզրակացութեան:

Արտաշեսեան թագերը ունին ոճային ընդհանրութիւն մը, որ զանոնք դիւրութեամբ կը զատորոշէ եւ կարելի է բաժնել երկու տեսակներու:

Առաջին եւ զլիսաւոր տեսակը կը կազմեն (նկ. 1) Արտաշէս Ա.-էն մինչեւ Տիգրան Բ.-ի թագերը, ուր Անտիոքեան շրջանի հատումներու վրայ հասած են իրենց գազաթնակէտին: Այնտեղ կը նշմարենք ձեւազարդութիւնը եւ զարդերու այնպիսի բնույթը, չըջագծերու եւ զարդերու այնպիսի բնույթը, որ կը զանազանուի նոյն արքայատոհմի բոլոր այլ թագերէն:

Երկրորդ տեսակը կամ տեսակները, Արտաշէս Բ.-էն սկսած եւ մինչեւ Տիգրան Ե. շարունակուող թագերու (նկ. 2) շարքը, որոնք սկզբնական՝ Արտաշէս Բ.-ի ժամանակաշրջանին, կարելի է սահմաններու մէջ պահպանելով հանդերձ աւանդական թագի ընդհանուր ձեւը եւ համեմատութիւնները, իրենց մանրամասնութիւններու եւ բովանդակութեան մէջ ճշակի եւ որակի աստիճանական զիջումներու կ'ենթարկուին:

Ինչպէս կը տեսնենք, Տիգրան Բ.-ի թագը ոչ միայն յատակ ձեւ մը ունի, այլ նաեւ, ու մանաւանդ, մանրամասն յարդարանքով բովանդակութիւն, հասնելով կազմաւորման եւ կատարելագործման գազաթնակէտին:

Ձանազան դրամներու վրայ այլազան բարձրութիւններով, սակայն նոյն ոճով, իր ներքին յարդարումներուն՝ մարդարտաշարեր, արեւ եւ երկու անձիւններ, հասած է ձեւի եւ բովանդակութեան այնպիսի հաւասարակը՝ ութեան եւ ներդաշնակութեան, որ կարելի է նոյնիսկ ենթադրել թէ ինչ նիւթերէ կազմուած է Տիգրան Բ.-ի թագը:

Տիգրան Բ.-ի թագերը կարելի է նկարագրել միջին ձեւի մը որդեգրումով, նկատի ունենալով մի քանի թագերու զանազան մասերու յարաբերութիւնները: ՈՏԻ նոյնութեան առկայութեան պարագային իսկ, կան մասնաւորաբար բարձրութիւններու տարբերութիւններ, ուր ցցուն զմբեթածեւ մասերով վերջացող թագերը աւելի բարձր են քան անոնք որոնց նոյնանուն մասերը կազմուած են երկու մարդարտաձեւ կլորներով, որոնք հաւանաբար ակներ կամ մարդարիտներ կը խորհրդանշեն:

Վիժակը հաւանաբար կազմուած է մետաքսով, ներքնակը՝ բրդեայ: Երջագարուած է կարուած մարդարիտներով: Անցուրտ երկիրներուն բնորոշ կլիմայական պահանջ մըն է, որ իր ուրոյն տեղը ունի Արտաշեսեան թագի ձեւաւորման մէջ:

Այս առթիւ որպէս նախատիպար ընտրեցինք (նկ. 3) Երեւանի Պատմական Թանգարանին պատկանող Տիգրան Բ.-ի այն դրամը (ՈՅ 157), որ ունի գեղեցիկ զարդարանքներ, միշտ նկատի առնելով մեր տրամադրութեան տակ գտնուող Տիգրանեան դրամներուն հաւաքածոն՝ եւ անոնց չափերու միջինը եւ ընդհանուր յարաբերակցութիւնները:

Թագին ստորոտի հորիզոնական գիծը զայն կը բաժնէ վիժակի վերջաւորութենէն: Եթէ միջին անձի մը զլիսուն շրջագիծը ընդունինք 52-էն 58 սմ., այս պարագային տրամագիծը կ'ըլլայ 18 սմ., իսկ բարձրութիւնը, առանց անջատ ցցուն մասերուն, մետաւորապէս մէկ սմ. աւելի՝ 19 սմ.:

<sup>1</sup> Զ. Պտուկեան, Արտաշեսեան Հարստութեան դրամները, Վիեննա, Միլիթարեան տպարան, 1983:

<sup>2</sup> Նոյն, տախտակներ՝ 1-8:

Նկատի ունենալով տուեալ ժամանակաշրջանին տրամադրելի նիւթերը, ներքին կառոյցին համար հաւանաբար օգտագործուած է հաստ կաշի, որուն վրայ պէտք էր պատուած ըլլար ծիրանի (pourpre, purple) մետաքս կամ թաւիչ: Ստորտի զարդաձեւը ոսկեհիւս դերձաններու միջեւ մարգարիտներ, կամ ամբողջովին ոսկեայ հաստ լարեր՝ ընդելուզուած մարգարիտներով:

Գրամներու վրայ երկու արծիւներու գոյութիւնը պատահական երեւոյթ մը չէ, մանաւանդ երբ նկատի ունենանք Տիգրան Բ.-ի ներքին նուաճումները՝ Փոքր Հայք, Ծոփք (Sophene) եւ Կոմմագենէ (Commagene): Զախ կողմի արծիւը հաւանաբար կը խորհրդանշէ Հայաստանի նորանուաճ մասը, իսկ աջինը՝ Մեծ Հայքը: Իսկ Արտաւազգ Բ.-ի ժամանակ, երբ նուաճումները զարգած էին եւ հայ Արտաշէսեաններու իշխանութիւնը միայն Մեծ Հայքի վրայ կը տարածուէր, արծիւները փոխարինուած են թափնի տերեւներով<sup>3</sup>, որպէս խաղաղութեան եւ ոչ-նուաճումի խորհրդանշիչ:

Կարելի է առարկել թէ այդ պարզային կրնային Մեծ Հայքը խորհրդանշող միայն մէկ արծիւ մը քանդակել: Տուեալ հարցին կրնանք պատասխանել հետեւեալը՝ Արտաւազգ Բ.-ի սկզբնական շրջանի արծուկի թագերը շարունակութիւնն էին հօրը՝ Տիգրան Բ.-ի ստեղծած աւանդութեան եւ անոնք զոյուցենէ զարդեցան<sup>3</sup> Արտաւազգ Բ.-ի թագաւորութեան քաղաքական եւ զինուորական անբարենպաստ ժամանակաշրջանին, ուր իր նեղ սահմաններուն վերածուած Հայաստանի մը զաղափարը չէր կրնար հոգեպէս բաւարարել Արտաւազգ Բ.-ի նման զգայուն արուեստասէրի մը արժանապատուութիւնը՝ տեսնել մէկի վերածուած արծիւը, հաւանաբար այն համարելով նուաստացում եւ միանգամ ընդմիջում հրաժարելով թագի վրայ երկու արծիւներ քանդակելու սովորութենէն, որոնք վերստին կ'երեւան տարիներ յետոյ, Երատոյ թագուհիի թագին վրայ, այլ կեցուածքով<sup>4</sup>, շատ կարճատեւ շրջանի մը

<sup>3</sup> Հ. Տէր Ղեւոնդեան, Ոսկերչական իրեղեններ եւ անոնց գործածութիւնը Հայաստանի մէջ նախաքրիստոնեական շրջանին, Բաղմամէյ, 1982, թիւ 1—2, նկար 8:

<sup>4</sup> Հ. Վարդան Վ. Հայրենի, Պատմութիւն հին հայ տարազին, Վենետիկ, Ս. Ղազար, 1923, ձեւ 33:

համար: Զոյգ արծիւներու զոյուցիւնը դրամներու վրայ կրնանք եղակի երեւոյթ մը նկատել Հայոց Պատմութեան մէջ, բնորոշ յագեցուած ազգային իղձերու:

Թագի վրայի Արեւը եւ երկու արծիւները շատ հաւանաբար պատրաստուած էին նուրբ ոսկեթել գործուածքով եւ կամ առանձին դրուագուած բարձր աստիճանի փափուկ ոսկիով: Նոյն նիւթով պէտք է որ պատրաստուած ըլլային նաեւ վերելի ցցուն մասերը, որոնք երբեմն զոյգ մակադրուած (superposé, superimposed) գնդիկներ են: Ասոնք մարգարիտներ, բուստեր (corail, coral), սաթեր (ambre, amber) կամ սարդիոններ ու բերդակներ էին: Այստեղ կրնանք նկատի ունենալ տուեալ ժամանակաշրջանի զիտարուեստը, երբ միայն ոչ շատ կարծր վերոյիշեալ քարերը կրնային ձեւաւորել, իսկ յակինթ, դմրուխտ, շափուղայ եւ ազամանդ կը գործածուէին անտաշ, նախնական վիճակի մէջ:

Թագի վերելի ցցուն մասերը, որոնցմէ կ'իտաղէմ (profil) վիճակի մէջ կը տեսնենք չորս կամ հինգ հատ, գլխի թագի շուրջ կրնանք ընդունիլ միայն ութ հատ (նկ. 4), քանի որ չորս կամ հինգ, կլորի վրայ ոչ մէկ տարբերութիւն չէին կրնար ունենալ եւ անոնց թիւը՝ ութը, կը համապատասխանէ Արեւ-աստուծոյ խորհրդանշիչ վարդեակի (Rosace) վրայի ճառագայթանման թերթերու թիւին: Ծատ հաւանական է որ ութը թիւը ունէր իր իւրայատուկ իմաստը, քանի որ այն բոլոր գրամներուն թագերուն վրայ, որոնք բարձրորակ եւ յստակ մամլում ունին, ութ թիւը կը մնայ նոյնը:

Այստեղ անհրաժեշտ է յիշել որ Հեթանոս Հայաստանը ունէր ութ յայտնի մեհակներ՝ Արտաշատի մէջ (Անահիտի), Արտաշատ (Տիրի), Թորթան (Բարչինիայ), Անի (Աքամազդ), Երեզ (Անահիտ), Թիւ (Նանէ), Բաղայառինչ (Միհր), Աշտիշատ (Վահագն եւ Աստղիկ): Համաձայն Ազաթանդեղոսի, վերոյիշեալներն էին ութ ամենայայտնի տաճարները, թէեւ, Մ. Սորենայի մօտ տեղադրումները քիչ մը կը տարբերուին, սակայն անոնց թիւը կը մնայ նոյնը՝ Ութ<sup>5</sup>:

Կը կարծեմ որ վարդեակի թերթերու թիւը (ութ) եւ ցցուն մասերու թիւը (ութ),

<sup>5</sup> Ա. Կարիէր, Հեթանոս Հայաստանի ութ մեհակներն, Վիեննա, 1899, էջ 24:

կը խորհրդանշեն ութ յայտնի մեհակները, ուր արեւի ճառագայթները, նոյնացուած են ութ լուսատու մեհակներու, իսկ թագի ցցուն մասերը՝ մտքի եւ հոգիի բարձունքներու:

Գալով մեր կողմէ կատարուած, արեւի եւ զոյգ արծիւներու տեղադրման ուղղումին, այն անհրաժեշտ էր (նկ. 5) նկատի ունենալով որ թագի աջ կողմը (թագաւորի կիսադէմը [profil] միշտ դէպի աջ զարձած է) ցոյց տրուած են երկու դէմ առ դէմ, Արեւին կողմը նայող արծիւներ: Եթէ այս երրորդութեան ներկայ դիրքը ընդունինք որպէս վերջնական, պէտք է ենթադրենք, շատ արդարացիօրէն, որ նոյնք պէտք էր կրկնուէր նաեւ ձախին, ինչ որ համոզիչ չէ, քանի որ չորս արծիւներ, կրկնուած վիճակի մէջ, նոյն թագին վրայ, չեն իմաստաւորուիր, այլ էր եթէ այնտեղ տարբեր պատկերաքանդակ մը ենթադրէինք: Ներկայ տեղադրութեան «սխալ» նպատակային է եւ մար երբեակը իր ամբողջութեամբ:

Անհրաժեշտ է նկատի ունենալ որ տուեալ դարաշրջանին միայն կիսադէմեր կը քանդակուէին գրամներու վրայ, իսկ կիսաքանդակուէին գրամներու ճակատի վրայ երդէմին համապատասխան անհնարին էր եւ կու արծիւները ցոյց տալ անհնարին էր որ պիտի միայն մէկ արծիւ եւ կէս արեւն էր որ պիտի երեւար: Այս իր նպատակին պիտի չձառաքէր, որն էր՝ ցոյց տալ թէ Տիգրան Բ., արքայից արքան, կը թագաւորէր Մեծ եւ Փոքր Հայքերու միացեալ թագաւորութեան վրայ:

Այստեղ անհրաժեշտ է միջանկեալ յայտնել որ Տիգրան Բ.-ի եւ Արտաւազգ Բ.-ի ժամանակակից Կոմմագենէի Անտիոքոս Ա.-ի մանակակից Կոմմագենէի Անտիոքոս Ա.-ի թագաւորութեան մէջ գործածուած թագերը կը ձգտին նմանիլ վերոյիշեալներուն, թէեւ չունին այն կոնաձեւ կառոյցը որ կը բնորոշէ Արտաշէսեաններու թագերը եւ անոնց բարձր կառոյցը յստակ քաղաքական մրցակցութեան արդիւնք է (նկ. 6):

ՆԱԿԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Արտաշէսեան թագերը հաստատօրէն կը սեռին հայկական ժողովրդական գլխանոցներէն, որոնք պատկերուած են Հռովմէաներէն, որոնք պատկերուած են Հռովմէաներէն շքադրամներու վրայ, շէտելու համար Հայաստանի ժամանակաւոր դրաւումները

իրենց կողմէ<sup>3</sup>: Թէեւ իրենց անջատ մասերուն մէջ Արտաշէսեան թագերը ունին որոշ, թերեւս պատահական, նմանութիւններ Ուրարտական վիժակներուն եւ Ասորական գլխանոցներուն, սակայն անոնց ձեւաւորումը, ուրոյն է եւ ոչ փոխառութեան արդիւնք:

Միշտ հաշուի առնելով մարդկային գլխի դիւրաշարժութեան հնարաւորութիւնները, որպէս ծանր նիւթ այնտեղ նկատի ունենալ նուազապէս չափով ոսկի, միայն հիմնական կառոյցի ցողիկներու եւ արտաքին զարդերու համար:

Նկատի ունենալով հին Հայոց մօտ առկայ Արեւապաշտութիւնը (Մ. Սորենայի, Հ. Ղեւոնդ Ալիշան եւ Ե. Ներսէսեան) թագի երկու արծիւներու միջեւ ութ թերթերով վարդեակը, իր ճառագայթանման վերջաւորութիւններով, ընդունիլ որպէս հեթանոս Հայոց պաշտած կուսքերէն Արեւ-աստուծոյ կերպարը, որ յետագային, որպէս զարդ-վարդեակ, ընդհանրացած է Հայկական Քրիստոնէական ճարտարապետութեան մէջ, երբեմն տասներկու թերթերով, հաւանաբար խորհրդանշելով տասներկու առաքեալները:

Թագի վերելի ութ ցցուն մասերը նկատել խորհրդանշերը հեթանոս Հայաստանի ութ ամենայայտնի մեհակներուն, որոնք սխտեմատիկ կերպով հիմնայատակ քանդուեցան Մ. Գր. Լուսաւորչի նախաձեռնութեամբ, եւ նկատի ունենալ վարդեակի ութ թերթերու կամ ճառագայթներու եւ թագի ցցուն մասերու միջեւ իմաստի կապ կամ նոյնութիւն:

Վարդեակ-Արեւի երկու կողմերու արծիւները նկատել խորհրդանշերը Մեծ եւ Փոքր Հայքերու եւ անոնց նոյն թագի վրայ տեղադրումը նկատել միացեալ Մեծ Հայաստանի խորհրդանշը, որ իրազօրծուած էր Տիգրան Բ.-ի կայսրութեան կարճատեւ շրջանին:

Արեւի եւ երկու արծիւներու թագի ճառագայթները մեր վերատեղադրումը՝ նկատել տրամաբանական:


Նկատի ունենալով յետագայ դարերու Արշակունի արքայատոհմի թագաւորութեան ընթացքին նոյն՝ Արտաշէսեան թագերու հաւանական գործածութիւնը, ինչպէս նաեւ

Բագրատունիներու Բիւզանդիոնի կայսրէն եւ Արար ամիրայէն թագ ստանալը, որոնցմէ ոչ մէկ նկար, մանրանկար կամ քանդակ մը նացած է գանոնք նկարագրել կարենալու համար, ինչպէս նաեւ Ռուբինեաններու արեւմտաեւրոպականի կրկնութիւնը կազմող թագերը, Արտաշէսեան թագերը կրնանք նրկատել որպէս Հայոց պատմութեան միակ ազգային ժողովրդական ծագումով թագածեւր:

Այս հարցի կապակցութեամբ՝ արեւի եւ երկու արծիւներու մասին մեր խօսակցութեան ընթացքին, այլ կարծիք յայտնեց ակադեմիկոս գրամագէտ Հայր Օգոստինոս Սեքուլեան, որ այս երբեակը կը նկատէ տեսակ մը

զինանշան, կրկնուած նաեւ միւս կողմը, այլ խօսքով չորս արծիւներ եւ երկու արեւներ, կրկնուած՝ համաչափութեան համար: Յարգելով հանդերձ Հ. Օ. Սեքուլեանի կարծիքը, որ կը ստեղծէ տեսակ մը կարծիքներու առողջ փոխանակութիւն, կը մաղթենք որ այս հարցով հետաքրքրուող այլ անձեր եւս իրենց կարծիքները յայտնեն այս լուրջ խնդրի մասին՝ ստեղծելով հետաքրքրութիւն մը, որ վստահօրէն պիտի ծառայէր ճշմարտութեան յայտնաբերման եւ օգնէր մեր նպատակին՝ լուսաբանումը Արտաշէսեան ազգային թագերու զարդերու եւ անոնց հաւանական իմաստաւորման:


ՀԱՅԿ ՏԵՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ




նկ. 1.- Համադրական վերակազմութիւն Տիգրան II-ի թագի.  
ill. 1.- Synthesis of Tigran II's crowns.



նկ. 2.- Համադրական վերակազմութիւն Արտաշէսեան թագի.  
ill. 2.- Synthesis of Artavazd II's crowns.



նկ. 3.- Նախատիպար. Տիգրան II-ի թագի.  
ill. 3.- Prototype of Tigran II's coins.



նկ. 4.- Թագերու վերեւի գցում մասերը.  
ill. 4.- The convex ends of the crowns.



նկ. 5.- Տիգրանեան թագը արծիւներու եւ Արեւի վերատեղադրումէն յետոյ.  
ill. 5.- Tigran II's crown after replacement of eagles and Sun-God.



նկ. 6.- Անտիոխոս Ա.-ի թագ.  
ill. 6.- Crown of Antiochus I.

## The Royal Crowns of the Artaxiad Dynasty of Armenia

Scholars have not as yet given serious study to the royal crown of the Armenian Artaxiad dynasty. Up until now, P. Bedoukian's study<sup>1</sup>), focusing on the coins which depict the crown rather than the crown itself, has been the main source for scholarly study. My own continuing research for a book on this topic has yielded insights which I would now like to share with the public.

According to their style, the Artaxiad crowns can easily be divided into two groups. The first and most important group is composed of crowns from the time of Artaxiad I, founder of the dynasty, until Tigranes II, whose coins often depict the crowns (*illus. 1*). Based especially upon the coins from Antioch, this group of crowns reveals a distinctive clarity of line and form and a degree of perfection never obtained before. The second group includes the set of crowns from Artavazd II until Tigranes V. In the initial years of Artavazd II's reign, the coins maintained the general form of earlier coins, although the details of ornamentation, the choice of subjects, and artistic taste begin to decline (*illus. 2*).

A comparison of some of the best samples reveal that the crowns by the time of Tigranes II had adopted a median form. The comparisons show differences in the heights of the crowns. Those ending with salient convex tips are higher than those whose tips are composed of two pearl-like round balls, imitating pearls or other pierced gems.

Tigranes II's coin (*illus. 3*), belonging to the Historical Museum of Yerevan in Armenia (No. 157), can serve as a prototype of this period. The reader should also keep in mind the pictures, measurements, and interrelationships of the best Artaxiad coins represented in P. Bedoukian's collection<sup>2</sup>). The crown of this prototype includes the neck cover and ear flaps, typical for cold countries, and probably made of silk lined with woolen tissue and edged with pearls which help to shape the crown.

Considering the types of materials which were accessible in the 1st century B. C., I propose that thick leather was probably used for the internal construction of the tiara itself,

covered with purple silk or velvet. Very fine gold threads interwoven with pearls or thicker gold wires with pearl-like little balls could have easily been used to shape the bottom of the ornament.

The two eagles which appear on the crown are not without meaning. The left-sided eagle probably symbolizes Tigranes II's conquests of the minor kingdoms (Lesser Armenia, Sophene, and Commagene), while the right-sided eagle symbolizes Greater Armenia. In fact, in the last years of Ardavades II's reign, when the conquered territories were relinquished and the Armenian Artaxiad's authority extended only to Greater Armenia, the eagles were replaced with laurel leaves<sup>3</sup>), signifying peace.

Why didn't one eagle remain on the crown to symbolize Greater Armenia? The answer may lie in the fact that the very short-lived period of successful rule had turned into unfavorable times; so the eagles disappeared completely to give way to a more peaceful sign.

After three decades and many succeeding kings, the eagles appear again on the crown of Queen Erato<sup>4</sup>), this time in a more modest position. Times had changed. The dynasty would soon disappear from history. The double eagles on the Armenian Artaxiad crowns can therefore be considered a unique representation in Armenian history, signifying the satisfaction of national aspirations and royal pride.

The eagles and the central sun were probably knit with very fine gold threads or chiselled with tender, high grade gold. The round forms could have been pearls, corals, amber, sardonix or turquoise – but not hard gems.

Although we only see four or five of the convex ends on the crown, there must have been eight, as indicated in our drawing (*illus. 4*). The number eight corresponds to the number of petals of the flower-like form which symbolizes the Sun-God which the Armenians worshipped. It is also very probable that the eight convex ends of the crown symbolized the eight famous pagan temples of Armenia<sup>5</sup>),

which Agathangel writes about in his Armenian history.

We have relocated the eagles and the Sun-God from the right side of the crown to the front since the appearance of four eagles and two suns on one crown seems repetitious and unconvincing (*illus. 5*). We intentionally corrected this "error" since placement on the front of the crown in the direction of the King's profile (to the right) would only reveal one eagle and half of the sun. This displacement of the trio on the entire right side of the crown allows the engraver to more easily depict these images in their entirety and possibly to satisfy the King's vanity and pride.

Although the same style of crowns is depicted on the bas-reliefs of Nemrut Dag, with floral and animal decorations, their height and non-conical form suggests a distinct political antagonism and competition between Antiochus I of Commagene and the Artaxiads of Greater Armenia (*illus. 6*).

### CONCLUSION

The Armenian Artaxiad crowns are certainly derived from the popular Armenian headdress depicted on Roman coins and medals from the 1st century B. C. until the 2nd century A. D. Such coins include inscriptions such as: "Armenian Capta" surrounded with feminine forms representing Armenia and celebrating the Roman's temporary occupations of the country.

Although the Artaxiad crowns may appear to resemble the Urartian neck covers with earflaps and Assyrian headdress, the likeness is coincidental. Their shape is not the result of borrowing but of an original, individual creation.

To allow for mobility of the human head while wearing a crown, only small quantities of gold were probably used in the basic construction and decoration of the crowns.

Knowing that the Armenians practiced Sun worship (M. Korenatsi, Fr. G. Alishan, and Y. Nercessian), we can perceive the rosace, with its ray-like form in the middle of the two onlooking eagles, as a symbol of the

Sun-God. Later during the Christian era, this symbol was generalized in Armenian architecture and sometimes depicted with twelve petals, perhaps symbolizing the twelve Apostles.

The eight convex erected tips probably symbolize the eight famous Armenian pagan temples which were systematically destroyed following St. Gregory the Illuminator's initiative. It is also quite possible that the eight erected convex tips of the royal crown (tiara) and the eight ray-like petals have a similar symbolic meaning.

For various reasons, we consider the Artaxiad crowns to be the sole nationally and popularly inspired crowns in Armenian history: the Arsacid dynasty possibly used the crowns; the Byzantines and Arabs offered the crowns to the Bagratids in the beginning of their reign (artistic depictions of this historical fact do not remain); and the Roupinian dynasty used crowns inspired by occidentals.

I am convinced by the argument that the two eagles placed on the crown on both side of the Sun-God represent the unified Armenia which was realized for a short period during the Armenian Empire. I also believe that the relocation of the sun and eagles from the right side of the crown to the front is a sound and convincing interpretation. During a conversation on this topic, Fr. O. Sekoulian disagreed with this interpretation, contending instead that the group represents some kind of coat of arms, repeated on both sides. Although I find such a theory to be worthy of consideration, I am still more convinced by the relocation argument. The door, of course, is open to future discussions and illuminations of the meaning of the Armenian Artaxiad royal crowns – a research topic which is continually challenging.

1. P. Bedoukian, *Coinage of the Artaxiads of Armenia*, Vienna, 1983.

2. Same, plates 1-8.

3. Haik Ter-Ghevondian. *Voskerchakan ireghen-ner yev anontz gordzadzontione Hayastani mech nakhakristoneakan shertchanin*. Bazmavep. 1982. Venice. No. 1-2. ill. 8.

4. Fr. Vardan Hatzouni. *Patmoutioun Lin Lay tarazin*. Venice. St. Lazare. 1923. ill. 33.

5. A. Carrière. *Hetanos Hayastani out mehiannern*. Vienna. 1899. page 24.